

—579), որով ծ տարուով կը ստացուի 541: Վեց ամիս վերջը կը կանչուի ե. Վշնասպ յար-
քունիս, բարի երթ մաղթելու համար կը ներ-
կայանան մարգպանին «Վրաստանի գլխաւորը
(die Spitzen), Սամուէլ կաթողիկոսն Վրաս-
տանի (հմմտ. եւ p. 892, 894), Գրիգոր տա-
նուտէրն (Hausvater) Վրաստանի, Աշուշայ
բղեշին Վրաց (Arbaba oder Arscheschi
der Pitiaschsch Georgiens) եւ ուրիշ սե-
պուհք: Տնտեսէրն Գրիգոր շատ հաւանական
է որ ըլլայ Վրաստանի տէրը, միջաւարը (թա-
գաւորն ըստ Տարեգրոց) իր քով երկրորդական
տեղն կը բռնէ Աշուշայ, ոչ իբրեւ թագաւոր
այլ իբրեւ սոսկ բզեւաշն. Ինչպէս 606ին
Աւրանբսհի քով Աշուշայն Նիստեղով թէ
հիներու ընտանեկան սովորութիւնն էր որդին
պագուն անուամբն յորջորջել, հաւանական կը
կարծենք ենթագրել թէ Աշուշան Վազգէն
բղեշին որդին է. պատճառ չկայ մերժելու զայս.
եւ որ շատ համաձայն կու գայ թէ Հ. Գաթր-
ճեանի այն կարծեաց, թէ Աշուշայ սովորական
անուն մ'էր Գուգարաց բզեշից (հմմտ. ՀԱ.
123), եւ թէ պարագայից, յայտնի է որ Վազ-
գէն ունէր Ս. Հուշանկէն երեք ուսոր եւ մէկ
գուսոր, որոնցմէ մին գետակուր վարձանեցաւ
Կուրի մէջ (Սոփիքը, Թ. էջ 13, 30), եթէ
ուշիդ է մեր ենթագրութիւնը, այն ասան ցան-
կալի գիւտէ զատ — Կարմիր Վարդանի թոռնն,
Ս. Հուշանկան որդւոյն վրայ է խօսքս, — կ'ու-
նենաք Գուգարաց ծանօթ բզեշինեբու յաջոր-
դականութեան ցանկ մը այսպէս.

1. Աշուշայ, կը յիշուի 432—455.
2. Վազգէն անոր որդին, 455?—+482.
3. Աշուշայ անոր որդին, 482?—541?.
4.
5. Աշուշայ, որդին անծանօթի մը, թոռն
Բ. Աշուշայի, յիշուած 606ին:

Յուսալի է դեռ վրացերէն վկայաբանու-
թիւններէ ուրիշ նման գիւտեր:

Այժմ աւելի հաստատութիւն կ'առնու
մեր այն ենթագրութիւնն թէ կնիքս կը վերա-
բերի 606ին յիշուած Աշուշային (հմմտ. ՀԱ.
126), յամբ 541 դեռ Պարսից ներքեւ էր Գու-
գարը, եւ զգուարաւ կրնար յուշարէն կնիք մը
պէտք ըլլալ Բ. Աշուշային:

Հ. Ն. ԱՅՈՐԾԱՆՆ

1 Նման կերպով կը գրուի եւ Վազգէնի հօր անունն
Ս. Հուշանկան վրացերէն վկայաբանութեան մէջ. Vaghen un
patiaschkh, fils d'Areboura (Brosset, Addit. p. 77. n.).

ՀԱՅԿԱՎԱՆ ԸՐԶԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՒՂԱՐԻԹԻՆԻ ՄԷ ՅԻՓԼԻՍ ՅԻՒԼ ԳԻՒՂԱՐԻՍ (ՎՐԱՍՏԱՆ)

Ուսիլիս ցիխէ (ფეხის ციხე) գիւղը գտնուում
է Տփղիս նահանգում, Գորի գաւառում, Կուր
գետի ձախ կողմը: Նշանակաւ ժամանակները
եղած է մայրաքաղաք Վրաստանի. յիշատակ-
ւում է վրաց մատենագիրների մէջ (Յոթնամյակ
Երեւոյն հիշատակ) իբրեւ հեթանոսական քաղաք: Մէկ
ժամանակ վրաքնակ, այժմ բոլոր նորա ազգա-
նակութիւնը հայկական է: Վրաց մատենագիր-
ների անհեղինակութիւնները Ուսիլիս ցիխէի վերա-
բերաւ սակաւթիւն են:

Այս քաղաքի եկեղեցիների եւ պալատ-
ների պատերը զուրկ են արձանագրութիւններից.
մինչեւ այս օր ոչ մի վրացական արձանագրու-
թիւն չէ գտնուած:

Հայկական արձանագրութիւնը նոր է եւ
վերաբերւում է Հայ-գաղթականական շրջանին:
Գիւղը ունի նոր եկեղեցի. իսկ մի փոքր գուրս
— քարափոր մատուռ մը, որը ունի հայերէն
արձանագրութիւն:

Յ. ՌԱԴ (հ. 1034 կամ ք. 1585թ.)

ԵՍ ՄԻՄՏԻԶ ՄԱԶԴԱՍԻ

ԵՍԻ Ի ԴՈՒՌՈՍ ՍՐԵՀԱՆԻՍ: ՀԻՆԵՑԻ

ԽՈՐԱՆՍ ՈՎԷ ՊԱՏԱՐԱՊԵՏԻ ԵՒ ԵՒԵՑԻՔ

Ի ՄԱՔՐԱՓԱՍԱՆ ԱՂԱԹԵՐԻ:

Այս արձանագրութիւնը վկայում է, որ
1585թ-ին այստեղ եղել են հայեր, եւ շատ
վաղուց, որովհետեւ արդէն ենթադրուել են
վրացական ազդեցութեան: Ժամանակագրու-
թիւնը կարող է լինել եւ վրացական կամ քնչ-
պէս յիշատակւում է ազգային մատենագիրների
արձանագրութիւնների մէջ Հոռոմ-Կոմ¹, որի
սկիզբն է 781 թ. Բրիտանի. (ՌԱԴ = 1034
+ 781 = 1815թ). բայց այս արձանագրու-
թեան տառերի հնագոյն ձեւը տրամադրում է
մեզ ընդունել հայկական ժամանակագրութեան
թիւը:

Վ. ԳԱՐՈՐԾԱՆՆ

1 Յիւրացական տառը — Նշանակում է Յոթնամյակ
(բրիտանի) — ժամանակագրութիւն:

2 Յն. Վ. Ալեքան, Հիւրաք. 87 կամ Brosset, Les
ruines d'Ani, էջ 23: Այս Մայր եկեղեցւոյ արձանագրու-
թեան մէջ հռոմական 219 թուին համապատասխան է Հայ-
կական 450 թիւը կամ ք. 1000. Յն. M. Марр, Армянск,
монгольское иранское христианство в области от Кавказа до
Армении — Западная Азия. Спб., 1905 г. стр. 40—41. (Ն.
Մար. Արեւելեան բառի բացատրութիւնը եւ այլն):

